

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«29» հունվարի 2019թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ԳԱԱ), ի դեմս ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի, որը գործում է ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արգամ Հովսեփյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով ԳԱԱ-ն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 227161300 (երկու հարյուր քսանյոթ միլիոն հարյուր վաթսույնմեկ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) հատկացումը, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով, ընդ որում՝ Ծրագրի նկատմամբ Օրենքով հաշվարկված վերը նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարը 2019 թվականի ընթացքում ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական

Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի «Ավելացված արժեքի հարկից ազատվող գիտահետազոտական աշխատանքների չափանիշները սահմանելու մասին» N 772-Ն որոշմամբ, քանի որ Ծրագիրը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ԳԱԱ պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ԳԱԱ-ին,

2.4.6 ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում

Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով

ծեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

2.4.13 Ծրագրի նկատմամբ Օրենքով հաշվարկված ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարը 2019 թվականի ընթացքում վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ղեկավարվելով Օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի «Ավելացված արժեքի հարկից ազատվող գիտահետազոտական աշխատանքների չափանիշները սահմանելու մասին» N 772-Ն որոշմամբ, քանի որ Ծրագիրը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 227161300 (երկու հարյուր քսանյոթ միլիոն հարյուր վաթսուներեկ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ Օրենքով նախատեսված ԱԱՀ-ն, որը (ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումը) 2019 թվականի ընթացքում ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումար, քանի որ Ծրագիրը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման:

4 Մոնիթորինգ

4.1 ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության գանձապետական 900018005588 հաշվեհամարին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման

Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝ Կազմակերպության կողմից ԳԱԱ ներկայացված Պայմանագրի Հայտը, ինչպես նաև Պայմանագրի Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 3-ը, Հավելված 4-ը, Հավելված 4.1-ը և Հավելված 5-ը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Հայաստանի Հանրապետության
գիտությունների ազգային ակադեմիա**

ք. Երևան, Մարշալ Բաղդամյան պող. 24


«ՖՆ գործառնական վարչություն»

Հ/հ 900018005182,

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)



**«ԳԱԱ «Փորձաքննությունների
ազգային բյուրո» ՊՈԱԿ**

ք. Երևան, Իսակովի պող. 24


Երևանի թիվ 1 ՏԳԲ

ՀՀ՝ 900018005588

ՀՎՀՀ՝ 01836525

Տնօրեն՝ Ա. Հովսեփյան

(ստորագրություն)



Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Պ.Ոսկանյան (Տնօրենի տեղակալ գիտության գծով)

(անուն ազգանուն)

Հավելված 1
«29» հունվարի 2019թ.
N _____ պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Արգամ Հովսեփյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «29» հունվարի 2019թ. N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 227161300 (երկու հարյուր քսանյոթ միլիոն հարյուր վաթսունմեկ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ Օրենքով նախատեսված ԱԱՀ-ն, որը (ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումը) 2019 թվականի ընթացքում ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումար, քանի որ Ծրագիրը ենթակա չէ ԱԱՀ-ով հարկման:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղդամյան պող. 24
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900018005182,
ՀՎՀՀ՝ 00005673

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ

ք. Երևան, Իսակովի պող. 24
Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ՝ 900018005588
ՀՎՀՀ՝ 01836525

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան




(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

Տնօրեն՝ Ա. Հովսեփյան



(ստորագրություն)

Պ.Ոսկանյան (Տնօրենի տեղակալ գիտության գծով)
(անուն ազգանուն)

Առաջադրանք

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության
ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) գործունեության՝ փորձագիտության բնագավառում գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական, գիտաուսումնական աշխատանքների կատարման ապահովմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում իրականացվելիք աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջներն ըստ էության համապատասխանում են կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված գործունեության հիմնական նպատակներին.

-իրավասու մարմինների կողմից նշանակված փորձաքննությունների ապահովմանն ու բարելավմանը նպատակաուղղված գիտահետազոտական, գիտատեխնիկական, գիտափորձնական աշխատանքների կազմակերպում և իրականացում,

-դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու նպատակով հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգում, նորերի մշակում, դրանց փորձարկում և գործածության համար երաշխավորում,

-հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրում, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների մշակում և իրավասու մարմինների համար վերջիններիս ներդրման հետ կապված համապատասխան առաջարկությունների նախապատրաստում և այլ ուղղություններով քրեաբանական հետազոտությունների կազմակերպում և իրականացում,

-քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող փորձաքննությունների իրականացման ոլորտում ժամանակակից գիտափորձնական մեթոդների, գիտատեխնիկական միջոցների մշակում, փորձարկում և ներդրում,

-քրեաբանական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ վիճակագրական, հոգեբանական, քաղաքագիտական, սոցիոլոգիական և հասարակական այլ գիտությունների բնագավառներում հարցումների, մշակումների, վերլուծությունների կազմակերպում,

-փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցում և վերապատրաստում կազմակերպելու նպատակով համապատասխան գիտաուսումնական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ

-փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և կատարելագործման նպատակով համապատասխան գիտաուսումնական աշխատանքների իրականացում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց որակավորման հավաստման հետ կապված հարցերի մշակում և հարցաշարերի կազմում:

4. Աշխատանքի բովանդակությունը՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 2019 թվականի ընթացքում նախատեսում է առաջնահերթ իրականացնել հետազոտական աշխատանքներ (գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական և գիտաուսումնական), այդ թվում՝ գիտաժողովների և համաժողովների մասնակցություն, սեմինարների իրականացում՝ նպատակաուղղված ձեռքբերված գիտելիքների ընդլայնմանը (կիրառմանը) և նոր գիտելիքների ստացմանը (կիրառմանը): Կազմակերպությունում համաձայն հաստատված կառուցվածքի և հաստիքացուցակի 29 փորձագիտական տեսակներով գործելու են 18 փորձագիտական բաժիններ (ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական, սննդամթերքի և խմիչքների, էկոլոգիական, հողագիտական և կենսաբանական, տնտեսագիտական և հաշվապահական, շինարարատեխնիկական, ճարտարագիտատեխնիկական, ապրանքագիտական, ձգաբանական, հետքաբանական, ֆոտոտեխնիկական, դիմանկարային տեսա- և աուդիոձայնագրական, ձեռագրաբանական, հեղինակային և փաստաթղթաբանական, ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և տրանսպորտահետքաբանական, պայթյունատեխնիկական և հրդեհատեխնիկական, մշակութաբանական, դատաբժշկական, համակարգչատեխնիկական, հոգեբանական և դեպքի վայրի) իրագործելով դատական փորձաքննությունների կազմակերպման և կատարման գիտական ապահովումը՝ ուղղված ձեռքբերված գիտելիքների ստացմանը (կիրառմանը) դատական փորձաքննությունների ժամանակակից գիտական պատկերացումներին համապատասխան մեթոդների կիրառմամբ՝ ապահովելով դատափորձագիտական բնագավառի ենթակառուցվածքների պահպանումն ու զարգացումը: 2019 թվականի ընթացքում իրագործվելու են նաև ուսուցման, վերապատրաստման և որակավորման բարձրացման աշխատանքների գիտական ապահովումը, ինչպես նաև քրեաբանական գիտահետազոտական աշխատանքները՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում հանցավորության և դրա առանձին տեսակների պատճառների և նպաստող պայմանների, դրանց կրիմինոլոգիական և վիկտիմոլոգիական գործոնների բացահայտմանն ու կանխարգելմանը: Նշված աշխատանքները նպատակաուղղվելու են նաև հայ-ամերիկյան (INL) միջկառավարական ծրագրի շարունակականությունն ապահովելուն:

Այսպիսով, Կազմակերպությունում 2019 թվականի ընթացքում իրականացվելու են գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական և գիտաուսումնական բնույթի հետևյալ հիմնական աշխատանքները.

• Գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքներ.

2019թ-ի ընթացքում Կազմակերպությունն ակնկալում է գիտական գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացման, փորձագիտական նեղ-մասնագիտական ուղղությունների զարգացման և նորարարական մոտեցումների ներդրման աշխատանքների կատարում:

նախանշվել են դատական փորձագիտության, քրեագիտության և քրեաբանության բնագավառներին առնչվող մի շարք նոր գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքներ՝ ուղղված ձեռքբերված գիտելիքների ընդլայնմանը (կիրառմանը) և նոր գիտելիքների ստացմանը (կիրառմանը), այդ թվում՝

-«Կաչուն ժապավենների հետազոտության և դրանց նույնականացման առանձնահատկությունները» /թեմայի ղեկավար՝ Հ. Այվազյան/,

-«Բժշկական սխալների և արյան շրջանառության համակարգի հիվանդություններով պայմանավորված մահերի միջև պատճառահետևանքային կապերի համալիր գնահատականը» /թեմայի ղեկավար՝ Կ. Մխիթարյան/,

-«Հայաստանի Հանրապետությունում առավել տարածված այրվող և դյուրավառ նյութերի ու դրանց այրման հետքերի փորձարարական բազայի ստեղծում» /թեմայի ղեկավար՝ Դ. Մելքումյան/,

-«Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների մոդելավորմամբ նոր «PC Crash» համակարգչային ծրագրի մեթոդի տեղայնացում» /թեմայի ղեկավար՝ Դ. Դավաթյան/,

-«Կերպարվեստի բնագավառի փորձաքննությունների ժամանակակից տեսակների և դրանց կատարման առանձնահատկությունների հետազոտությունը և համակարգումը» /թեմայի ղեկավար՝ Է. Ավանեսով/,

-«Սինթետիկ կանաքինոիդների փորձագիտական հետազոտության ժամանակակից մեթոդները վալիդացումը և տվյալների բազայի՝ (GC-MSD) գրադարանների համալրումը» /թեմայի ղեկավար՝ Ա. Թովմասյան/,

-«Ներտնային գազասպառման համակարգում ածխածնի միտոքսիդի առաջացման և բնական գազի արտահոսքի հետևանքով տեղի ունեցած դժբախտ դեպքերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակման և գործարկման առանձնահատկությունները» /թեմայի ղեկավար՝ Ա. Բաղեյան/,

-«Հայաստանի Հանրապետությունում թմրանյութերի ապօրինի շրջանառության պատճառների, պայմանների, նպաստող գործոնների և դրանց կանխման հիմնախնդիրների հետազոտությունները» /թեմայի ղեկավար՝ ս. գ. թ. Ս. Մխիթարյան/,

-«Դատաապրանքագիտական փորձաքննությունների շրջանակում անշարժ գույքի (բնակելի տների, հասարակական նշանակության օբյեկտների) շուկայական արժեքի պարզման նպատակով համեմատական անալոզների համակշռության որոշմանն ուղղված նոր մեթոդաբանության մշակման և տեղայնացման առանձնահատկությունները» /թեմայի ղեկավար՝ Հ. Գաբրիելյան/,

-«Կազմակերպությունների «իրական անվճարունակության» ֆինանսատնտեսագիտական դատական փորձագիտական հետազոտությունների համալիր կատարման գիտական հիմքերը և մեթոդաբանության զարգացումը» /թեմայի ղեկավար՝ տ. գ. թ. Կ. Մամիկոնյան/,

-«Հողային ռեսուրսների պահպանման և օգտագործման հիմնախնդիրները, օրենսդրության պահանջների խախտումով դեպքերի փորձագիտական հետազոտությունների լիակատար իրականացմանը խոչընդոտող հանգամանքների ու օրենսդրական դաշտի բացերի հայտնաբերումը, հետազոտումը և գնահատումը» /թեմայի ղեկավար՝ Ա. Սանթրոսյան/,

-«Ձեռագրերում և ստորագրություններում դիագնոստիկական հատկանիշների հայտնաբերման և հետազոտության առանձնահատկությունների ուսումնասիրությունը» /թեմայի ղեկավար՝ Մ. Կարապետյան/,

- Տարբեր ճանապարհային պայմաններում բեռնատար ավտոգնացքների արգելակման պարամետրերի փորձագիտական ուսումնասիրության ուղեցույցների մշակում (չոր և խոնավ ճանապարհային ծախսերի) /թեմայի ղեկավար՝ Դ. Գաբրիելյան/

- Պահկուծի և գնդակի վրայի հետքերի հետազոտությամբ կրակող զենքի մոդելի որոշման և առկա հետքերով կրակող զենքի նույնացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը» /թեմայի ղեկավար՝ Վ.Հովհաննիսյան/,

-«Նավթամթերքի բինար և բարդ խառնուրդների հետազոտման մեթոդիկայի մշակում» /թեմայի ղեկավարներ՝ Ա.Գալստյան, Ա.Աբգարյան/,

-«Դատական կենսաբանությունում արյան տիպային պատկանելիության որոշումն ըստ M, N իզոշճաբանական համակարգի» /թեմայի ղեկավար՝ Կ.գ.թ.Ա. Նավասարդյան/,

-«Տնտեսական արդյունավետության որոշման մեթոդաբանության մշակումը պետական բյուջե վերադարձվող միջոցների վերաբերյալ դատարանների կողմից ընդունված որոշումների տեսանկյունից» /թեմայի ղեկավար՝ տ.գ.թ.Կ.Մամիկոնյան/:

Պետք է նաև նշել, որ 2019թ-ին շարունակվելու է նաև գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքների իրականացումը նախորդ տարիներին նախանշված մի շարք ուղղություններով, այդ թվում՝

-«SIS 11» ծրագրի հետազոտական հնարավորությունների ուսումնասիրությունը և նրա դերը աուդիոձայնագրային փորձաքննություն իրականացնելիս» /թեմայի ղեկավար՝ Ս.Բադալով/,

-«Քաղաքաշինության, անշարժ գույքի և հողաշինարարության բնագավառում նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները և առանձնահատկությունները փորձագիտական հետազոտություններում» /թեմայի ղեկավար՝ Ա.Միրաքյան/,

-«Հակավնասաբեր ծրագրային ապահովումների կողմից չհայտնաբերվող (PE) գործարկվող վնասաբեր ֆայլերի հետազոտության և ուսուցանելի մեթոդական առաջարկությունների հիմնավորումը» /թեմայի ղեկավար՝ Ա. Հարությունյան/,

-«Հայաստանի Հանրապետությունում իրացվող սննդամթերքների հետազոտությունը, դրանց համապատասխանությունը ՀՀ-ում և ԵՏՄ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջներին և անվտանգությանը վերաբերող փորձաքննությունների կատարման առանձնահատկությունը» /թեմայի ղեկավար՝ Կ.գ.թ. Թ.Ավետիսյան/,

-«Փաստաթղթերում ագրեսիվ գործողությունների ազդեցությունը գնդիկավոր գրելագործիքներով կատարված գրառումների վաղեմության (ծերացման) վրա» /թեմայի ղեկավար՝ Հ.Նարիբյան/,

-«Հայաստանի Հանրապետության տարածքում աճող ծառատեսակների բնափայտի տարեկան օղակների համեմատական հետազոտության առանձնահատկությունները «Lintab» LTM06-E սարքավորման (փորձագիտական հավաքածու, մոդել և TSAP-Win բազմաֆունկցիոնալ ծրագիր) միջոցով. տվյալների բազայի հավաքագրում» /թեմայի ղեկավար՝ Ա. Պետրոսյան/,

- «Գործող և կոնսերվացված պոչամբարների ազդեցության գնահատումն ըստ ծանր մետաղների և համապատասխան հողային տարածքների քարտեզագրման» /թեմայի ղեկավարներ՝ տ.գ. թ. Մ. Խաչատրյան, Գ. Համբարյան/,

-«Կենսաբանական օբյեկտների մեջ /մազ, մեզ, արյուն/ Հայաստանի Հանրապետությունում առավել տարածված թմրանյութերի և հոգեմետ դեղամիջոցների հայտնաբերման քիմիկոտոքսիկոլոգիական անալիզի առկա մեթոդների մշակումն ու գործնական ներդրումը տոքսիկոլոգիական փորձագիտական հետազոտություններում» /թեմայի ղեկավար՝ Ն.Կիրակոսյան/,

-«Ինքնասպանություն և ինքնասպանության փորձ կատարած անձանց դատահոգեբանական փորձաքննության առանձնահատկությունները» /թեմայի ղեկավար՝ Ա.Վարդանյան/:

Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման և պետական

ենթակետով նախատեսված միջոցառումներն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության 11.06.2009թ. № 638-Ն որոշմամբ Կազմակերպության կազմում գործող Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից կատարվող քրեաբանական հետազոտությունների շրջանակներում 2019 թվականին շարունակվելու են հանցավորություն ծնող պատճառների և նպաստող պայմանների բացահայտմանը, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների գիտական մշակմանը և իրավասու մարմինների համար վերջիններիս ներդրման հետ կապված համապատասխան առաջարկությունների նախապատրաստմանն ուղղված հետազոտական աշխատանքները:

Մասնավորապես՝ 2019 թվականին շարունակվելու են Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ 2018թ-ից սկսված հետազոտական աշխատանքները: Նախատեսվում է նշված հանցատեսակների վերաբերյալ իրականացնել պաշտոնական վիճակագրության վերլուծություն մինչև 10 կամ 15 տարվա կտրվածքով, Քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ ավարտված և արդեն օրինական ուժ ստացած դատավճիռներով քրեական գործերի ուսումնասիրություն, փորձագիտական հարցման իրականացում, թմրանյութերի վերաբերյալ փորձաքննությունների արդյունքում ստացված տվյալների ուսումնասիրություն, թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի, դրանց կանխարգելման, վնասակար հետևանքների չեզոքացման, թմրամոլների արդյունավետ բուժման, կանխարգելիչ արդյունավետ միջոցների ներդրման ոլորտում միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրություն:

2019թ-ին շարունակվելու են նաև Արցախի Հանրապետությունում գողությունների կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնների բացահայտմանն ուղղված հետազոտական աշխատանքները: Մասնավորապես՝ իրականացվելու են Արցախում գողությունների վերաբերյալ քրեական գործերի պաշտոնական վիճակագրության ուսումնասիրություն, որոնց տվյալները կմշակվեն և կմուտքագրվեն SPSS ծրագրով և ստացված արդյունքները կներկայացվեն վերլուծության տեսքով:

Կազմակերպությունը, գիտահետազոտական բնույթի աշխատանքների ընդլայնման նպատակով 2019 թվականին նախատեսում է նաև իրականացնել նոր հետազոտական աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- «Բուժօգնության ցուցաբերման դեֆեկտների և մահվան պատճառների միջև պատճառահետևանքային կապերի համալիր գնահատականը ըստ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությունների 2006թ.-2018թ. նյութերի»: Հետազոտությունների ընթացքում նախատեսվում է իրականացնել 2006-2018թթ. ժամանակահատվածում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում կատարված հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննությունների եզրահանգումների վերլուծություն: Վերլուծության համար առանձնացվելու են բուժօգնության ցուցաբերման դեֆեկտների վերաբերյալ դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննությունների արդյունքում կատարված եզրահանգումները, որոնք վերաբերում են սուր զարգացած ախտահարումներին (սրտի պսակաձև զարկերակներում արյան շրջանառության սուր խանգարում, սրտամկանի սուր ինֆարկտ, սրտի տամպոնադա, թոքային զարկերակի թրոմբոզ, իշեմիկ և հեմոռագիկ ինսուլտ, ներանոթային տարանջուր մակարդման համախտանիշ, ներքին սուր արյունահոսություն և այլն),

հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրումը և փորձագիտական համալիր գնահատականը ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի նյութերով»: Հետազոտությունների ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ ներկայացած (կամավոր կամ օրենքի շրջանակներում) կանաքիս օգտագործող անձանց անանուն հարցում ըստ մշակված հարցաթերթիկների, ինչպես նաև իրականացնել այդ անձանց մոտ կանաքիս թմրամիջոցի առկայության փորձագիտական հետազոտության արդյունքների և տարբեր գործոնների համահարաբերական կապերի վերհանում:

2019թ-ի ընթացքում Կազմակերպությունում շարունակվելու են իրականացվել աշխատանքներ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Եվրոմիության երկրների, ԱՊՀ երկրների և Վրաստանի դատափորձագիտական և գիտական առաջատար կենտրոնների հետ, ինչը թույլ կտա Հայաստանի Հանրապետությունում բարձրացնել դատափորձագիտական բնագավառում փորձագիտության արդյունավետությունը և ստացվող արդյունքների արժանահավատությունը՝ օգտագործելով նաև դատական փորձաքննության ժամանակակից մեթոդներն ու հնարավորությունները:

Կարևոր է նշել, որ Կազմակերպությունը, հանդիսանալով Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) լիիրավ անդամ, մասնակցելու է «Փորձագիտական աշխատանքային խմբեր»-ի (FWG) աշխատանքներին և 2019թ-ին նախատեսում է շարունակել միջազգային պրակտիկայում ընդունված փորձագիտական մեթոդների և մեթոդիկաների ձեռքբերման և դրանց ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչը մեծապես կնպաստի իրականացվող փորձաքննությունների որակի շարունակական բարելավմանը և և արդյունքների հավաստիության բարձրացմանը: Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) հետ համագործակցության շրջանակներում 2019թ. ընթացքում նախատեսվում է նաև շարունակել աշխատանքները ENFSI-ի կողմից մշակված լավագույն փորձի ձեռնարկների (Best Practice Manual, (BPM)) թարգմանման և համապատասխան մասերի տեղայնացման ապահովման ուղղությամբ:

• Գիտագործնական բնույթի աշխատանքներ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական փորձաքննությունների իրականացման գործընթացն իրենից ներկայացնում է կոնկրետ դեպքում համապատասխան հատուկ գիտելիքների կիրառմամբ իրականացվող գիտագործնական աշխատանքի տեսակ, նախատեսվում է 2019թ-ին կազմակերպել մի շարք գիտագործնական սեմինարներ և խորհրդակցություններ՝ նպատակաուղղված արդի փորձագիտական խնդիրների քննարկմանը, վերլուծությանն ու լուծման հնարավոր ուղիների նախանշմանը: Կազմակերպության գիտական գործունեություն իրականացնող անձնակազմի կողմից իրականացվելիք նշված աշխատանքներին, բացի կազմակերպության համապատասխան աշխատողներից, նախատեսվում է մասնակից դարձնել նաև այլ փորձագիտական կառույցների փորձագետների, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների համապատասխան մասնագետների, Հայաստանի Հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների և պետական այլ մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Գիտագործնական բնույթի աշխատանքների բարելավման և միջազգային գործընկեր կառույցների առաջավոր փորձին ծանոթանալու, ինչպես նաև միջազգային մեթոդիկաների, տեխնոլոգիական հետազոտությունների ասպիտման, դատական փորձաքննությունների

սարք-սարքավորումների ներդրման հնարավորությունների և անհրաժեշտության դիտարկման, առկա հնարավորությունների ընդլայնման նպատակով Կազմակերպությունը 2019թ-ին շարունակելու է ակտիվ մասնակցել առցանց սեմինարներին միջազգային գործընկեր կառույցների հետ, ինչպես նաև մասնակցել միջազգային գործընկեր փորձագիտական կառույցների կողմից կազմակերպվելիք տարբեր գիտական միջոցառումներին:

2019թ-ին Կազմակերպությունը համագործակցության շրջանակներում Ճապոնիայի Շրջակա միջավայրի վերահսկման կենտրոնի (Environmental Control Center Co., Japan) հետ համատեղ նախատեսում է հստակեցնել կատարվող աշխատանքների ուղղությունները՝ իրականացնելով շրջակա միջավայրի մշտադիտարկման գործնական համակարգի ճապոնական փորձի վերլուծություն և ներդրման հնարավորությունների դիտարկում, նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների վերլուծություն, և դրանք հնարավորինս գործնականում կիրառելով Հայաստանի Հանրապետության դատափորձագիտության բնագավառում էկոլոգիական փորձաքննություններ իրականացնելիս:

